

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 62/11

27 դեկտեմբերի 2013 թ.

Քննարկվեց <էլիտ Արման Շին> ՍՊԸ 17.12.2013 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ 11.11.2013 թ-ի թիվ 1108315 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 29.08.2013 թ-ի թիվ 1108315 հանձնարարագրի <էլիտ Արման Շին> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ 11.11.2013 թ-ի թիվ 1108315 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է հետևյալը:

<էլիտ Արման Շին> ՍՊԸ-ն Շիրակի մարզ ք.Գյումրի, Խանջյան փողոց թիվ 9 հասցեում 2013 թ-ի հուլիսի 12-ից սկսել է շահագործել ավտոգազալիցքավորման ճնշակային կայան (ԱԳԼԾԿ), որտեղ ՀՀ կառավարության սահմանած տեխնիկական կանոնակարգին համապատասխան լիցքավորման բաշխիչ աշտարակները ստուգաչափվել և ստուգաչափման մասին վկայականներ տրամադրվել են 2013 թ-ի օգոստոսի 24-ին: Ընկերության կողմից 2013 թ-ի հուլիս ամսվա համար Գյումրու ՏՀՏ չի ներկայացվել ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից գազի ֆիզիկական ծավալների և հաստատագրված վճարի չափի մասին տեղեկություններ: Խախտվել է <Հաստատագրված վճարների մասին> ՀՀ օրենքի 59.8 հոդվածի 2-րդ կետի պահանջները, որով սահմանված է, որ գազալցման կայանների միջոցով ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեություն իրականացնողները համարվում են հաստատագրված վճար վճարողներ, քանի դեռ առկա չեն՝ ՀՀ կառավարության 28.08.2008 թ-ի թիվ 1101-Ն որոշմամբ սահմանված տեխնիկական կանոնակարգին համապատասխան բաշխիչ աշտարակներ: Նշված կանոնակարգի 23-րդ գլխի 149 կետը սահմանում է, որ ԱԳԼԾԿ-ում շահագործող բոլոր չափման միջոցները, հսկիչ-չափիչ սարքերը, որոնք տեղադրված են գազատարների և ազրեգատների վրա ենթակա են չափագիտական հսկողության և վերահսկողության՝ համաձայն <Չափումների միասնականության մասին> ՀՀ օրենքի, որի 2-րդ հոդվածը սահմանում է, որ չափագիտական հսկողությունը՝ դա չափման միջոցների տեսակի հաստատում, չափման միջոցների նախնական և հետագա ստուգաչափում, չափագիտական հսկողություն և փորձաքննությունն է:

Համաձայն <Հաստատագրված վճարների մասին> ՀՀ օրենքի 59.9 հոդվածի 1-ին կետի և 59.10 հոդվածի՝ 2013թ-ի հուլիս ամսվա համար հաշվարկվում է հաստատագրված վճար 1283100 դրամ:

Հիմք ընդունելով <Հաստատագրված վճարների մասին> ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ կետի, 94/1 հոդվածի 3-րդ պարբերության և <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի դրույթները հաստատագրված վճարի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 2.567.074 դրամ:

<էլիտ Արման Շին> ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Ընկերությունը <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 3-րդ հավելվածով սահմանված կարգի համաձայն 10.09.2013 թ-ին մինչև ստուգում սկսելը փոստի միջոցով արդեն ներկայացրել էր ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից գազի ֆիզիկական ծավալների և հաստատագրված վճարի չափի մասին տեղեկությունները 2013 թ-ի հուլիս ամսվա համար, պահպանելով նաև <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի պահանջները: Այդ մասին վկայում է Գյումրու ՏՀՏ կողմից կազմած արձանագրությունը, որ 2013 թ-ի հուլիս ամսվա ավտոտրանսպորտային

միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից գազի ֆիզիկական ծավալների և հաստատագրված վճարի չափի տեղեկությունները թերի են, որը ստանալուց հետո 5-օրյա ժամկետում փոստի միջոցով ներկայացվել է ճշտված հաշվետվություն:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 02.03.2011 թ-ի թիվ 11 պաշտոնական պարզաբանման համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո մինչև այդ հաշվետու ժամանակաշրջանի հաշվարկների (հայտարարագրերի, հաշվետվությունների) ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետների վերջին օրը (վերջնաժամկետը) և դրանից հետո հարկային մարմին ներկայացված մեկից ավելի հաշվարկներից (հայտարարագրերից, հաշվետվություններից) առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված հաշվարկ (հայտարարագիր, հաշվետվություն), իսկ մյուսները՝ ճշտված (ճշգրտված) հաշվարկ (հայտարարագիր, հաշվետվություն):

Տեղեկությունը սահմանված ժամկետից հարկային մարմին ուշ ներկայացնելու համար ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ կողմից կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1716 արձանագրությանը առ 19.09.2013 թ-ի, որից հետո ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 23411 որոշումը առ 03.10.2013 թ-ի Գյումրու ՏՀՏ պետի ժ/պ կողմից: Տվյալ որոշմամբ ընկերության տնօրենը տուգանվել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով՝ 20000 դրամ գումարի չափով, որը վճարված է ամբողջությամբ:

Վերը նշվածից երևում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ-ն ընդունում է այն փաստը, որ «էլիտ Արման Շին» ՍՊԸ-ն ներկայացրել է 2013 թ-ի հուլիս ամսվա ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից գազի ֆիզիկական ծավալների և հաստատագրված վճարի չափի մասին տեղեկությունը, պահպանելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հավելվածով սահմանված կարգը և նույն օրենքի 25-րդ հոդվածի պահանջները:

Ստուգման ակտը կազմվել է և լրացուցիչ պարտավորություններն առաջադրվել են հիմք ընդունելով 2013 թ-ի հուլիս ամսվա տեղեկությունը ներկայացված չլինելու հանգամանքը, որը, սակայն, ակնհայտ հերքվում է վերը հիշատակված փաստերով և իրավական հիմքերով: Նման պայմաններում ստուգման ակտով սխալ է կիրառվել «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 94-րդ հոդվածի 4-րդ կետը և 94/1 հոդվածի 3-րդ պարբերությունը: Հաշվի առնելով նշված հանգամանքն ընկերությունը խնդրում է ամբողջությամբ չեղյալ համարել 11.11.2013 թ-ի թիվ 1108315 ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում Հանձնաժողովն արձանագրեց, որ ընկերության կողմից 10.09.2013 թ-ին փոստի միջոցով ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ է ներկայացվել 2013 թ-ի հուլիս ամսվա «Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնողների կողմից գազի ֆիզիկական ծավալների և հաստատագրված վճարի չափի մասին» տեղեկությունները (այսուհետ նաև Տեղեկություններ):

Հանձնաժողովն արձանագրեց նաև, որ ընկերության կողմից Տեղեկությունները ներկայացվել են ընկերությունում ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգումը փաստացի սկսելու օրը:

Տեղեկությունները ընկերության կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու հիմքով ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ-ում սկսվել է վարչական վարույթ և 19.09.2013 թ-ին կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1716 արձանագրությունը: Արդյունքում քննելով 19.09.2013 թ-ի թիվ 1716 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը 03.10.2013 թ-ին ընդունվել է վարչական

իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 234111 որոշումը, որով Տեղեկությունները սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու համար ընկերության տնօրենը <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի համաձայն ենթարկվել է պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի:

Հանձնաժողովը գտնում է, որ վերոգրյալ փաստական հանգամանքները վկայում են այն մասին, որ վարչական մարմինը՝ ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ-ի, ըստ էության, ընդունել է ընկերության կողմից Տեղեկությունները ներկայացված լինելու հանգամանքը: Սակայն, ստուգման ակտով Տեղեկությունները չներկայացնելու հիմքով կիրառվել է <Հաստատագրված վճարների մասին> ՀՀ օրենքի 94.1-րդ հոդվածի 3-րդ պարբերությամբ նախատեսված տուգանքը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է հիշատակել հետևյալ իրավանորմերի դրույթները:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները>:

Իր հերթին, նույն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. <Եթե վարչական մարմինը որեւէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձեւով, ապա միանման դեպքերում հետագայում եւս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձեւով>:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ 03.10.2013 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 234111 որոշմամբ Տեղեկությունները սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու համար ընկերության տնօրենին պատասխանատվության ենթարկելու հանգամանքը վկայում է այն մասին, որ վարչական մարմինն ընդունել է ընկերության կողմից Տեղեկությունները ներկայացված լինելու փաստը: Այսինքն, ստուգման ակտով Տեղեկությունները չներկայացնելու հիմքով ընկերության նկատմամբ հաստատագրված վճարի գծով լրացուցիչ պարտավորությունների առաջադրումը հիմնավոր չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Գյումրու ՏՀՏ 11.11.2013 թ-ի թիվ 1108315 ստուգման ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ